

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10
վիճակագրության պետական խորհրդի նիստի

02.09.2010թ.

ժ.11: 00

Մասնակցում էին՝

Ս.Մնացականյան (խորհրդի նախագահ), Գ.Անանյան, Գ.Գևորգյան, Վ.Դավթյան, Ա.Աղազարյան (խորհրդի անդամներ)

Հ. Գրիգորյան (խորհրդի քարտուղար)

Հրավիրված էին՝ Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Լ.Պետրոսյան (վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ), Ա.Մարտիկյան (մարդահամարի վարչության պետ), Ա.Սաֆյան (միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ), Գ. Նշանյան (մարդահամարի պլանավորման և ծրագրամեթոդաբանական բաժնի պետ), Ա.Մարտիկյան (մարդահամարի վարչության պետ), Կ.Կույումջյան (մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ), Գ. Մարտիրոսյան (գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ), Ս. Պողոսյան (իրավաբանական բաժնի պետ):

Օրակարգի նախագծում` երեք հարց.

1. ««Հայաստանի Հանրապետության 2010 թվականի փորձնական մարդահամարի հարցաթերթ», «Ձև թիվ 4-Հսկիչ թերթ», «Ձև թիվ 5-Տեղեկանք», «Ձև թիվ 6-Վերահսկիչ փաստաթուղթ» ձևաթղթերը և «Հայաստանի Հանրապետությունում 2010 թվականի փորձնական մարդահամարն անցկացնելու և մարդահամարի հարցաթերթը լրացնելու կարգի մասին» հրահանգը հաստատելու մասին» հարցը:

/Ձեկուցող` Գ.Նշանյան/

2. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

2.1. Հաղորդում Ճապոնիայի Չիբա և Տոկիո քաղաքներում 04.05-10.07.2010 թ. տեղի ունեցած ՄԱԿ-ի Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի վիճակագրական ինստիտուտի (UN SIAP) կողմից կազմակերպված «Վիճակագրական տեղեկատվության ստացման նոր տեղեկատվական և տեխնոլոգիական մեթոդներ» թեմայով դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Ձեկուցող` Ա. Դավթյան/

2.2. Հաղորդում Շվեյցարիայի Ժնև քաղաքում 05-09.07.2010թ. տեղի ունեցած ՄԱԿ-ի Եվրոպայի Տնտեսական Հանձնաժողովի (UNECE) և Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատի) հրավերով «Մարդահամարներ և կացարանների հաշվառումներ» խորագրով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Ձեկուցող` Գ. Գևորգյան/

2.3. Հաղորդում Դոմինիկյան Հանրապետության Բավարո քաղաքում 14-16.07.2010թ. տեղի ունեցած «Մարդահամարի վերլուծությունների ուղղությամբ կարիքների գնահատում» թեմայով սեմինարի աշխատանքներին մասնակցելու վերաբերյալ:

/Ձեկուցող` Կ. Կույումջյան/

2.4. Հաղորդում Բելոռուսի Հանրապետության Մինսկ քաղաքում 22-25.08.2010թ. տեղի ունեցած ԱՊՀ անդամ երկրների վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 43-րդ նիստին և Բելոռուսի վիճակագրության 90 ամյակին նվիրված «Բելոռուսի Հանրապետության վիճակագրություն. երեկ, այսօր, վաղը» գիտա-գործնական կոնֆերանսին և 2011թ. տվյալներով միջազգային գլոբալ համադրումների ծրագրով միջազգային աշխատանքային սեմինար խորհրդակցությանը մասնակցելու վերաբերյալ:

/Ձեկուցողներ` Ս.Մնացականյան, Գ.Մարտիրոսյան/

3. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Բովերակության արդյունքները-կողմ` 5, դեմ` 0, ձեռնպահ` 0/

Լսեցին՝

1. ««Հայաստանի Հանրապետության 2010 թվականի փորձնական մարդահամարի հարցաթերթ», «Ձև թիվ 4-Հսկիչ թերթ», «Ձև թիվ 5-Տեղեկանք», «Ձև թիվ 6-Վերահսկիչ փաստաթուղթ» ձևաթղթերը և «Հայաստանի Հանրապետությունում 2010 թվականի փորձնական մարդահամարն

անցկացնելու և մարդահամարի հարցաթերթը լրացնելու կարգի մասին» հրահանգը հաստատելու մասին» հարցը:

/Ձեկուցող՝ Գ.Նշանյան/

Որոշեցին՝

Հաստատել «Հայաստանի Հանրապետության 2010 թվականի փորձնական մարդահամարի հարցաթերթ», «Ձև թիվ 4-Հսկիչ թերթ», «Ձև թիվ 5-Տեղեկանք», «Ձև թիվ 6-Վերահսկիչ փաստաթուղթ» ձևաթղթերը և «Հայաստանի Հանրապետությունում 2010 թվականի փորձնական մարդահամարն անցկացնելու և մարդահամարի հարցաթերթը լրացնելու կարգի մասին» հրահանգը:

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

2. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

2.1. Հաղորդում Ճապոնիայի Չիբա և Տոկիո քաղաքներում 04.05-10.07.2010 թ. տեղի ունեցած ՄԱԿ-ի Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի վիճակագրական ինստիտուտի (UN SIAP) կողմից կազմակերպված «Վիճակագրական տեղեկատվության ստացման նոր տեղեկատվական և տեխնոլոգիական մեթոդներ» թեմայով դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

/Ձեկուցող՝ Ա. Դավթյան/

2.2. Հաղորդում Շվեյցարիայի Ժնև քաղաքում 05–09.07.2010թ. տեղի ունեցած ՄԱԿ-ի Եվրոպայի Տնտեսական Հանձնաժողովի (UNECE) և Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատի) հրավերով «Մարդահամարներ և կացարանների հաշվառումներ» խորագրով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

/Ձեկուցող՝Գ. Գևորգյան/

2.3. Հաղորդում Դոմինիկյան Հանրապետության Բավարո քաղաքում 14-16.07.2010թ. տեղի ունեցած «Մարդահամարի վերլուծությունների ուղղությամբ կարիքների գնահատում» թեմայով սեմինարի աշխատանքներին մասնակցելու վերաբերյալ:

/Ձեկուցող՝ Կ.Կույումջյան/

2.4. Հաղորդում Բելոռուսի Հանրապետության Մինսկ քաղաքում 22-25.08.2010թ. տեղի ունեցած ԱՊՀ անդամ երկրների վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 43-րդ նիստին և Բելոռուսի վիճակագրության 90 ամյակին նվիրված «Բելոռուսի Հանրապետության վիճակագրություն. երեկ, այսօր, վաղը» գիտա-գործնական կոնֆերանսին և 2011թ. տվյալներով միջազգային գլոբալ համադրումների ծրագրով միջազգային աշխատանքային սեմինար-խորհրդակցությանը մասնակցելու վերաբերյալ:

/Ձեկուցողներ՝ Ս.Մնացականյան, Գ.Մարտիրոսյան/

Որոշեցին՝

արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն

/Անհատական/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ